ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

« 20» մայիսի 2016թվականի N2-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ՄԱՅԻՍԻ 20-Ի ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով, որոշման նախագծի կողմ 4, դեմ 0, ձեռնպահ 0 քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին *որոշում է.*

Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված 2016թվականի մայիսի 20-ի թիվ 2-րդ նիստի օրակարգի վերաբերյալ որոշման նախագիծը.

1. ՀՀ Սյունիքի մարզի Հարթաշեն գյուղական համայնքի 2016-2019 թվականների «Զարգացման քառամյա ծրագրի» հաստատման մասին:
2. ՀՀ Սյունիքի մարզի Հարթաշեն գյուղական համայնքի ~~ավագանու~~ 2016թ.1-ին եռամսյակի բյուջեի կատարման հաղորդման մասին:
3. «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին:
4. Հարթաշեն գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին:

Կողմ- 4 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Մ. Արզումանյան
Վ . Մկրտչյան
Վ. Վանեսյան
Հ. Գրիգորյան

Համայնքի ղեկավար՝ Ա. Խաչատրյան

20 մայիսի 2016թ.
գ.Հարթաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«20»մայիսի 2016թվականի N3-Ն

Հ Հ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016_2019 ԹԹ.«ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հարթաշեն գյուղական համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝-4, դեմ-0, ձեռնպահ-0 Հարթաշեն համայնքի ավագանին *որոշում է.*

Հաստատել Հարթաշեն գյուղական համայնքի 2016-2019թթ.«Զարգացման քառամյա ծրագիրը» /կցվում է/:

Կողմ- 4 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Մ. Արզումանյան
Վ. Մկրտչյան
Վ. Վանեսյան
Հ. Գրիգորյան

Համայնքի ղեկավար՝ Ա. Խաչատրյան

«20» մայիսի 2016թ.
գ.Հարթաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՀԱՐԹԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Ա. Խաչատրյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016թ.մայիսի 20-ի թիվ 3 որոշմամբ

ՀԱՐԹԱՇԵՆ 2016թ.
(համայնքի անվանումը)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է քառամյա ծրագիրը

Ներածություն

1. Համայնքի իրավիճակի վերլուծություն և գնահատում
2. Հանրապետական և մարզային ծրագրերով նախատեսվող, համայնքին առնչվող իրականացվելիք միջոցառումների ներկայացում և գնահատում
3. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
4. Համայնքի ըստ առանձին ոլորտների առաջնահերթ նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում
5. Համայնքի ֆինանսական միջոցների վերլուծություն և կանխատեսում
6. Համայնքի ոլորտային կապիտալ ծրագրերի ձևակերպում և ամփոփում
7. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները

Եզրափակում

Հավելված 1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը

Հավելված 2. Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը

Հավելված 3. Համայնքի 2016-2019թթ. զարգացման քառամյա ծրագրի մշակման, քննարկման և հաստատման ժամանակացույցը

Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քառամյա ծրագրի մշտական հիմքերը /իրավական, քաղաքական, այլ/:
Համայնքը ճի առնչվում որևէ արտառոց իրավական խնդիրների: Չկա ոչ մի իրավական խոչնդոտ համայնքի զարգացման համար: Չի անտեսվում կամ շրջանցվում որևէ կանոնակարգ կամ օրենք համայնքի բնակչության կողմից:
Համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղությունները.

1. Համայնքի իրավիճակի գնահատում

1. 1. Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ.

Հարթաշենը հիմնադրվել է 1965-1970թթ. Այգեձոր, Ազատաշեն, Զորաշեն գյուղի բնակիչների կողմից: Դրանք հին գյուղեր էին, որոնք հիշատակվում են Մաղանջուղ, Արեգունի,Կյորու անուններով:Այդ հին գյուղերում կան բնական քարայրեր, խաչքարերով գերեզմանատներ, եկեղեցիներ քանդված վիճակով, որոնք վկայում են դրանց հին /10-17դդ/ լինելու մասին: Սահմանամերձ գյուղ է: Բարձրությունը ծովի մակարդակից 1350մ: Տաք, համեմատաբար խոնավ, մեղմ ձմեռ, հուլիսի միջին ջերմաստիճանը 19-21աստիճան,տեղումների քանակը՝450-550մմ: Գյուղատնտեսությունը հաճախակի տուժում է երաշտից, ուժեղ քամիներից և մառախուղից:
Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 250կմ, մարզկենտրոնից՝ 79կմ, Գորիս քաղաքից՝ 15կմ:
Պատմամշակութային կոթողներ՝ եկեղեցի Ս. Հռիփսիմե /16դ/, հուշաղբյուր /1990թ./ և խաչքարեր /1850թ./:

1.2 Ժողովրդագրություն

Բնակչության թիվը -779
Կանայք- 375
Տղամարդիկ -404
Բնակչության տարիքային կազմը՝
0-4 տարեկան- 42
0-15 տարեկան -163
16-60 տարեկան -210
61-ից բարձր -93
Հայրենական պատերազմի մասնակիցներ-0
Զոհվածների ընտանիքներ -6
Հաշմանդամներ- 5
Թոշակառուներ -142
«Փարոս» ընտանեկան նպաստ ստացողներ -15
Աշխատունակներ -270
Աշխատանք ունեցողներ -150
Գործազուրկներ -0
Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ -0
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ -3

1.3 Տեղական ինքնակառավարման մարմիններ

- Համայնքը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից, ով ընտրվում է չորս տարին մեկ անգամ:
- Համայնքի ավագանու անդամների թիվը՝ 4 հոգի
- Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը և հաստիքների թիվը՝ 11 հոգի
- Համայնքի ենթակայության կազմակերպությունների անվանումները և հաստիքների թիվը
- Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը ներկայացնել հավելված 1-ի տեսքով:

1.4 Համայնքի ձեռնարկությունները

- Ձեռնարկությունների թիվը, անվանումները՝
- Գործունեության բնագավառները՝ գյուղատնտեսություն,
- Արտադրատեսակները՝ կաթ, միս, հացահատիկ,
- Աշխատակիցների թիվը՝ հոգի:

1.5Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 25.03. 1997թիվ 235 որոշմամբ (Համայնքի սեփականություն համարվող ներկայում առկա գույքի ցանկը ներկայացնել հավելված 2-ի տեսքով):

- Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակի բնութագրումը
- Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացավ: Խմելու ջրի, կոյուղու ներհամայնքային ցանցերի /կառուցված համապատասխանաբար 1970թ-71թ.,/ մաշվածությունը հասնում է 35.40%: Ոչ բարվոք վիճակում են ճանապարհային ցանցն ու գյուղամիջյան փողոցները, որոնք տեղ-տեղ անանցանելի են դարձել: Ներկայումս հրատապ խնդիր է 5կմ ճանապարհների և փողոցների վերանորոգումը:
- Համայնքի առկա ենթակառուցվածքների վիճակների ընդհանուր գնահատականը, դրանց կապիտալ նորոգման, վերականգնման, փոխարինման ինչպես նաև նոր ենթակառուցվածքների կառուցման անհրաժեշտությունը

Աղյուսակ1. Համայնքի ենթակառուցվածքների գնահատում

Հ/Հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Մակերես ,ք. առ.մ.	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման/վերանորոգման/ փոխարինման կարիք	Այլ նշումներ
1	Վարչական շենք	Հարթաշեն	1980	150	միջակ	ունի վերանորոգման կարիք	
2	Մշակույթիտուն	Հարթաշեն	1981	500	վատ	ունի նորոգման կարիք	
3	Խմելու ջրիցանց	Հարթաշեն	1973	5 կմ	վատ	ունի նորը կառուցելու կարիք	
4	Ոռոգման ցանց	Հարթաշեն	1975	5 կմ	վատ	ունի նորոգման կարիք	
5	Մայրուղի	Հարթաշեն	1987	5 կմ	վատ	ունի նորոգման կարիք	
6	Մսուր մանկապարտեզ	Հարթաշեն	-	-	-	նորը կառուցել	
7	Գյուղամիջյան ճանապարհներ	Հարթաշեն	1986	5 կմ	վատ	ունի նորոգման կարիք	

1.6 Բնակելի և ոչ բնակելի տարածքների սպասարկում

- Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի և բնակարանների թիվը՝ քարե շենք- 150, դոմիկ՝-0
- Բնակֆոնդի ընդհանուր և բնակելի մակերեսը, այդ թվում 0 քմ-ը՝ համայնքային սեփականություն, իսկ 1500քմ-ը՝ մասնավոր (սեփակաշնորհված)
- Բազմաբնակարան վթարային բնակելի շենքերի և բնակարանների թիվը 0
- Կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի թիվը 0
- Համատիրությունների թիվը, բազմաբնակարան բնակելի շենքերի լիազորագրային և հավատարմագրային կառավարման մարմինների թիվը 0
- Բազմաբնակարան բնակելի շենքերի վերելակների թիվը և վիճակը 0
- Առանձնատների թիվը -150
- Վթարային առանձնատների թիվը -0
- Կիսակառույց առանձնատների թիվը -15
- Բնակարանի կարիքավորների թիվը -24
- Ոչ բնակելի տարածքների թիվը և մակերեսը -5000 քմ,

1.7 Հողօգտագործում

- Համայնքի վարչական տարածքը՝ 3167հա, այդ թվում՝
  - բնակարանային ֆոնդ -50 հա
  - արտադրական նշանակության հողեր -0
  - գյուղատնտեսական նշանակության հողեր -2901 հա
  - գերատեսչական հիմնարկների զբաղեցրած հողեր -4,22
  - հանգստի գոտիներ – չկա
  - ջրային ֆոնդեր -2,11
  - այլ
- Բնակավայրի տարածքը-50 հա
- Հողի սեփակաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը – 140
- Մեկ հողաբաժնի չափը-2 հա
- Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական պահուստային հողերը-0 հա
- Համայնքի սեփականություն համարվող հողերը -3167 հա
- Օտարված և օգտագործման տրամադրված հողեր – չկա

1.8 Գյուղատնտեսություն

- Գյուղատնտեսության ճյուղերը
  - դաշտավարություն
  - անասնապահություն
  - այգեգործություն
  - այլ